«Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին- Փուլ I»

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ ՝	Արդարադատություն
Տևողություն ՝	4 տարի
Իրականացման ժամանակահատված ՝	2009-2012
Ընդհանուր բյուջե ՝	18մլն եվրո
Բյուջետային աջակցություն ՝	16 մլն եվրո
Լրացուցիչ աջակցություն ՝	2 մլն եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակ ՝ Զնավորել արդարադատության ավելի արդյունավետ համակարգ, ապահովել արդարադատության համակարգի իրավական ևսոցիալական երաշխիքները՝ վերջինիս հասանելիության բարձրացման միջոցով, աջակցել մարդու իրավունքների ևհիմնարար ազատությունների պաշտպանությանը, իրավապահ մարմինների արդյունավետությանը, ինչպես նաև ներդնել նոր հակակոռուպցիոն միջոցառումներ:

Հատուկ նպատակներ ՝

Նպատակ I: Ապահովել անկախ ևհաշվետու արդարադատություն ևդատական վճիռների կատարման բարելավում,
Նպատակ II:. Ապահովել արդարադատության թափանցիկությունը և հակակոռուպցիոն միջոցառումների բարելավումը,
Նպատակ III: Բարձրացնել արդարադատության արդյունավետությունը,
Նպատակ IV: Բնակչությանը ավելի լավ ծառայությունների մատուցում,
Նպատակ V: Բարելավել արդարադատության համակարգի հասանելիությունը:

Բարեփոխումների շրջանակ:

- Արդարադատության անկախության ևհաշվետվողականության բարձրացում, ինչպես նաևդատավորների ընտրության, նշանակման, խթանման ընթացակարգերի թափանցիկության ապահովում՝ դատական վճիռների կատարումը բարելավելու միջոցով, ԵՄ չափանիշներին վարվելակերպի կանոնների մոտարկում, Արդարադատության խորհրդի գործառնական սկզբունքների վերանայում նպատիժը կիրառելու կանոնակարգերի կատարելագործում:
- Կոռուպցիոն ռիսկեր նվազեցում ևգործողությունների թափանցիկության ապահովում, «պատահական ընտրության» կիրառումը դատարաններում գործերի բաշխման, կոռուպցիոն դեպքերի հայտնաբերման մեխանիզմների

կատարելագործման նկարգապահական խախտումների նդատարանի գործունեության հանրային մոնիտորինգի ներդրման միջոցով։

- Արդարադատության արդյունավետության բարձրացում՝ առաջին ատյանի դատարանների դերի բարձրացման միջոցով, դատարանի արխիվների կառավարման արդիականացում, միասնական ձեւերի օգտագործմամբ դատական որոշումների որակի ապահովում, դատական կարգադրությունների վերաբերյալ վիճակագրության կատարելագործում, անչափահասների արդարադատության արդյունավետության բարձրացում՝ մասնագիտանալով առնվազն մեկ դատավոր յուրաքանչյուր դատարանում սկզբունքի վրա։
- Բնակչությանն ավելի լավ ծառայություններ մատուցում՝ փաստաբանների արդյունավետության բարձրացման, վեճերի լուծման այլընտրանքային մեթոդների խթանման, դատարանների համար նոր շենքերի կառուցում եւ առկա վերակառուցման միջոցով։

- Արդարադատության հասանելիության բարձրացում՝ հանրային պաշտպանի գրասենյակի գործառնական արդյունավետության բարելավման միջոցով, ԵՄ չափանիշներին համապատասխանող «անվճար» իրավաբանական օժանդակության ընդլայնում, հավաքական պահանջների ընթացքակարգերի հաստատում, Վարչական դատարանի և Վճռաբեկ դատարանի վճիռների դեմ բողոքարկման ընթացակարգերի և մեխանիզմների վերանայում և բարելավում։